

միայն տարիքի յառաջացմամբ կ'անհետանայ:

**Գուշակուրիս (Pronostica).** — Դիշերային սարսափիներն ընդհանրապէս ծանր չեն, և ո՛չ է ցաւալի զետեանը մը չեն թողոր: Սակայն վեստ այնպէս կ'ենթադէք որ անոնց յաճախակի կրկնութիւնը կրնայ կանխատեսել տալ ուղեղային ծանր հիւանդութիւն մը. ինչպէս նաև նկատել զայն իրը առաջին նշան վերնոտութեան (J. Simon), արգանդախոտի և կամ խենթութեան (Debacker):

**Խեմար (Cura).** — Մասնաւորապէս առողջարանական միջոցներով է որ պէտք է ինսամել զիշերային սարսափի ենթակայ տղարը, պէտք է ջանալ կանոնաւորել անոնց մարտութիւնը և պնդութեան առջնա առնել, ուշ ատեն կերցնելով չէ տրդայոց: Եթէ գեպքերը յաճախ կրկնուին, քնանալէ առաջ պէտք է տղուն տալ ժահուկ քնակալւոյէ (bromuro di potassio) և թիզ քանակութեամբ (dose) ըլորալով (cloralio) պատրաստուած ըմպելի գեղը

որ հանգարու քուն մը կը բերէ (West): Ոլիվիլ նոյն նպատակին համար կը յանձնարարէ զավշ. ջրոյ բաղնիքը, յանձնաւ բարեկի է նմանապէս թմրիկ (օխլամուր) խաշած ջրով բաղնիքը:

Սակայն զիշերային սարսափի բուժելու ամենէն աւելի ազդու միջոցն է՝ մանուկներու օրորցն իսկ վարժեցնել առանց լոյսի պառկելու և զգուշանալ մասնաւորապէս այն իսուակցութիւններէն և վախի այն ազդեցութիւններէն որոնց կրնան յուղել տղայոց միտոքը, մանաւանդ այն վայրկենին երը պառկելու կ'երթան, ինչպէս նաև զանց ընելու է երկակայեալ և ահարեկի զերեաթները: Սակայն զժրադարար այս միջոցները արենելիք մէջ ամենէն աւելի արդինաւորապէս գործածուածներն են տղայոց լացը զաղրեցնելու և անկողնոյն մէջ լոյկ Ֆիլիկ ընացնելու, առանց սակայն մայրեր նկատի առնելու բոլոր բարոյական ծանր հետեանցները, միշշցեռ մայրական սիրոյ բանաստեղծական երգերն են որ պէտք են օրորել մանկեկին անուշ մրափը:

Մ. ԽԱՐԱԿԱՆ

## ՄԻԱՄԵԱՅ ԴԱԴԱՐՈՒՄԸ ՄԵՐ ՏՊԱԳՐԱՏԱՆ

ԵՒ

### ՄԻԱԲՍՆՈՒԹԵԱՆԸ ՊԱՆԴԻԽԾՈՒԹԻՒՆԸ

Խոսլիա յանուն արդարութեան և ազգաց պատառթեան անցնելով Դաշնակից պետութեանց շարքը, տեսանը, պատերազմական չորս տարիներու ազետալի ժամանակամիջոցին, թէ ինչպիսի կորովով շողացուց սուրը և յարատեսց իր յաղթանակներուն մէջ՝ ընդգէմ լւստրիոյ, Քարոյի լեռնաշղթայից մի առ մի գրաւումով երր այլ ևն վաստօննա սպարապեսի թնդանօթներուն հարուածները սկսած էին թրիէսդի վրայ հասնիլ, ու Աւստրուանատ քանակները տագնապալի նահանջի հարկադրել, Հապսապուրկեան սասանած

տան թագաւոր-կայսրը, Գիբրմանիոյ օգնութիւնը կ'ազերսէր: Կրկին կայսրութեանց նենգաւոր հնարքները, ինչպէս Ռուսիոյ, Նոյնպէս Խոսլիոյ մարտիկները բարոյապէս տկարացնելով, Հոկտեմբերի վերջը կեղրոնական կայսրութեանց դաշնակից բանակները ամէն կողմէ բուռն սաստկութեամբ խուժել սկսան դէպ ի Պայինզիցա, զէպ ի Ազիակոյ, դէպ ի Քարօքզոյ՝ ուր խոտական զիմազրութիւնը տկարանալով և զօրքը խուճապի մատնուելով՝ հասան վենետիկոյ վերջին պատուար կրաքրա լերան ստորոտը, թիալէ

գետին երկայնքը՝ Նոյեմբերի առաջին օրեւ-  
րուն մէջ....:

Ահարեկիչ լուրը կայծակի երագու-  
թեամբ տարածուեցաւ ամէն կողմ, և տես-  
նելով մազապուրծ փախատականները և  
դասալիք զինուորներէ լսելով արեան ճա-  
պաղիներու և Դերման, Մանառ, Պուլզար  
և Թուրք զօրքերուն թւտինի, Ֆէլզրէի,  
Պէլլուննոյի մէջ գործը բռնութիւնները,  
այնու հանդերձ աննկուն կամրով կը յա-  
րատէինը մեր երկդարեան գործունէու-  
թիւնը (1717-1917) Ս. Ղազարու մէջ, և  
75ամեայ բազմակափ հրատարակութիւ-  
նը....

Դիբին էր ենթադրել որ թշնամին  
նպատակ ունէր ոտնակոփ ընել լուսպար-  
տիան, գրաւելով Պասանօն և թէ՛վլիզը,  
արգաւել Պատաւեան լաշտավայըր և ախ-  
րանալով վենեսեկոյ՝ ցաղաքացիները և  
ցաղաքը մատնել յաղթական զօրքերու  
աւարառութեան: Հրանօթներու աշանաւ-  
գոչ դղրգինը, սաւանակներու նախճիւ-  
ները ցաղաքացւոց սարսափը բազմա-  
պատկելով, օր ըստ օրէ բիւրաւոր ընտանիք-  
ներ վենետիկն կը մենէին դէպ ի Հա-  
րաւային իտալիա....:

Այնքան մօտալուս կը թուէր չընաղ  
վենետիկոյ անկումը որ ցաղաքագետական  
և զինուորական հեղինակութիւնները մեզ  
ևս խորհուրդ տուին 48 ժամուան մէջ  
փութալ մենէիլ Ս. Ղազարէն: Մենց ար-  
դէն սաւանակներու հրդեհիչ ոռոմերէն  
մեր հայկական ծեսազիրները և հնութիւն-  
ները ազատելու համար, առաջուց փու-  
խաղած էինք ի ֆլորենտիա, իսկ նոյեմ-  
բեր 8ի տագնապալից օրը՝ աննկարա-  
գրելի տիբութեամբ դարբեցնելով ամէն  
աշխատութիւն, մելինցանք վենետիկն դէպ  
ի վլդերպոյ ուր վեղարաւորաց վանքին  
մէջ 40 օր բնակելէ վերջ, կրցանց Հռովմ  
փոխազրուիլ, գործակցելու յօրուտ մեր  
ազգային դատին....:

Յաջորդ ամի Յունիս 2օրին Խաղաղիք  
թիալիչի վրայ Աւարփացւոց յարձակումը  
Զախարիակով՝ երբ ասնը սկսան վենետ-  
իկան շրջաններէն ի սպառ նահանջէլ, մենք  
ևս տակաւ առ տակաւ սկսան զիրա-  
զանալ Միիթթարայ ձեռակերու մեր Ս.  
Ղազարու վանքը, և արդէն Հոկտեմբերի  
սկիզբները ոչ միայն բոլոր մեր Հարբը  
այլ նաև Մուրատ-Ռափայեինան վար-  
ժարանի աշակերտութիւնը և Համալսա-  
րանական ուսանողները ուրախութեամբ  
համախմբուեցանց ի վենետիկ. ու երբ մեր  
գրացարներն ալ վերադարձան զինուորա-  
կան ծառայութենէն, կարելի եղաւ Դեկ-  
տեմբերի կէսն ձեռնարկել մեր տպագրա-  
կան գործերուն:

Ուստ առթիւ կը ծանուցանենք որ այժմ  
կազմուած է նոր խմբագրութիւն մը Բազ-  
մավէպի որ փափացող է ժամանակիս պա-  
հանջներուն համեմատ ամսէ ամիս ի լոյս  
ընծայել 1918ի պրակները. իսկ 1918էն  
հաստօք, միւնոյն տարուան ընթացքի ա-  
տեն հայկական նիւթերու ճոխ բովանդա-  
կութեամբ իրբե առանձին գիրք լոյս պիտի  
տեսնէ:

Ամերիկահայ թերթերու և մասնաւո-  
րապէս կոչնակի խմբագրութեան կը յայտ-  
նենք մեր նորին շնորհակալութիւնը՝ որ  
մեր Միարանութեան պանդիստութեան ա-  
տեն փոքր սփոփանք չեղաւ իր 1918ի  
Յունուարի և յետազայ ամիսներու մէջ՝  
բազմավէպի Ալամանգեայ յորելեանին  
առթիւ Միիթթարեան Գրական գործու-  
նէութեան տուած զորուատիքը, կը չնակի  
Յունուար 12ին ամբողջ շաբաթաթերթը  
որ Ճօնուած էր «Բազմավէպի» 75-ամեկա-  
կին, ինչպէս նաև թիւ 11 և 12ի մէջ  
միւնոյն առթիւ զետեղուած զորութեանց  
հեղինակներուն կ'ուզզենց մեր առանձին  
շնորհակալիքը, և կը մազթենց ամենուն  
Նոր Տարի, նոր գործունէութեան շրջան  
ազատ Հայաստանի մէջ:

31 Գնկտ. 1918.

Հ. Ն.